ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ավագանի

ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1

02.11.2026թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ՊԱՐՈՆ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Հաշվի առնելով Գյումրի համայնքի բնակիչների հանգստի և գիշերային անդորրի ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև բնակելի տարածքներին հարակից գործող ավտոլվացման կետերի գործունեության հետևանքով առաջացող աղմուկի և բնակիչների բնականոն կենսագործունեության խաթարման վերաբերյալ մտահոգությունները՝ առաջարկում եմ ձեռնարկել համապատասխան միջոցներ խնդրի կանոնակարգման ուղղությամբ:

Այս նպատակով ներկայացնում եմ «Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի վարչական տարածքում ավտոլվացման կետերի գործունեության ժամերի կարգավորման և բնակիչների գիշերային անդորրի ապահովման մասին» որոշման նախագիծը:

Նախագծի նպատակն է սահմանել ավտոլվացման կետերի գործունեության հստակ ժամային սահմանափակումներ, հատկապես գիշերային ժամերին՝ ապահովելով բնակիչների հանգստի իրավունքի պաշտպանությունը, հասարակական համակեցության կանոնների պահպանումը և տնտեսվարողների գործունեության պատշաճ կարգավորումը:

Հաշվի առնելով հարցի հրատապությունն ու հանրային նշանակությունը՝ խնդրում եմ ապահովել կից ներկայացվող որոշման նախագծի ընդգրկումը Գյումրի համայնքի ավագանու առաջիկա նիստի օրակարգում՝ այն քննարկելու և համապատասխան որոշում ընդունելու նպատակով:

02.11.26

Միաժամանակ խնդրում եմ հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին իրականացնել նախագծի իրավական ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում ներկայացնել համապատասխան առաջարկություններ՝ այն առաջիկա նիստում քննարկման ներկայացնելու համար:

Հարգանքով՝

«Քաղաքացիական պայմանագիր»
խմբակցության ավագանու անդամ
Էմմա Բարսեղյան

e-mail: emma.barseghyan@list.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2026 թվականի N ___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-ին կետը, հաշվի առնելով Գյումրի համայնքի բնակիչների հանգստի և գիշերային անդորրի ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի N 116-Ն որոշմամբ սահմանված՝ ժամը 23:00-ից մինչև 07:00-ն լռության կամ գիշերային անդորրի ապահովման ժամերը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի վարչական տարածքում բնակելի կառուցապատման տարածքներում, ինչպես նաև բնակելի շենքերին կամ անհատական բնակելի տներին անմիջականորեն հարակից տարածքներում գործող ավտոլվացման կետերի աշխատանքային ժամերը սահմանել 07:00-ից մինչև 23:00-ն:

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված տարածքներում ավտոլվացման կետերի կողմից ժամը 23:00-ից մինչև 07:00-ն ավտոմեքենաների լվացման, մաքրման, չորացման և սպասարկման աշխատանքների իրականացումն արգելվում է:

3. Ժամը 23:00-ից մինչև 07:00-ն ավտոլվացման կետերի տարածքում արգելվում է նաև բարձր աղմուկ առաջացնող սարքավորումների, այդ թվում՝ բարձր ճնշման լվացման սարքերի, կոմպրեսորների, փոշեկուլների և համանման սարքավորումների շահագործումը:

4. Սույն որոշման պահանջները չեն սահմանափակում ավտոլվացման կետի տարածքում անվտանգության, վթարային իրավիճակի կանխարգելման կամ անհետաձգելի տեխնիկական անհրաժեշտությունից բխող աշխատանքների իրականացումը, եթե դրանք չեն կարող հետաձգվել մինչև ժամը 07:00-ը:

5. Գյումրի համայնքի վարչական տարածքում գործող ավտոլվացման կետերի տնտեսավարողներին սույն որոշման պահանջներին համապատասխանեցման համար տրամադրել 1 շաբաթ անցումային ժամկետ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

6. Գյումրի համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման հրապարակումը և ավտոլվացման կետերի տնտեսավարողների իրազեկումը:

7. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնել օրենքով սահմանված իրավասությունների շրջանակում:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակելի տարածքներում բնակիչների հանգստի և գիշերային անդորրի ապահովման անհրաժեշտությամբ:

Ավտոլվացման կետերի գործունեության ընթացքում օգտագործվող բարձր ճնշման լվացման սարքավորումները, կոմպրեսորները, փոշեկուլները և այլ տեխնիկական միջոցները կարող են առաջացնել աղմուկ և անհանգստություն, հատկապես գիշերային ժամերին:

Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի N 116-Ն որոշմամբ համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտների և անձանց համար լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանվել են 23:00-ից մինչև 07:00-ն:

Նախագծի նպատակն է գործող կարգավորումը ավտոլվացման կետերի նկատմամբ դարձնել առավել հստակ և կանխատեսելի՝ սահմանելով դրանց աշխատանքի թույլատրելի ժամերը բնակելի կառուցապատման տարածքներում:

Նախագծով առաջարկվում է ավտոլվացման կետերի աշխատանքը բնակելի կառուցապատման տարածքներում սահմանել ժամը 07:00-ից մինչև 23:00-ն, իսկ 23:00-ից մինչև 07:00-ն արգելել ավտոմեքենաների լվացման, մաքրման, չորացման և սպասարկման աշխատանքների իրականացումը:

Նախագծով սահմանվող կարգավորումը նպատակ ունի պաշտպանել բնակիչների հանգիստը և գիշերային անդորրը՝ միաժամանակ պահպանելով տնտեսավարողների գործունեության կանխատեսելի և միասնական պայմանները:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում ավտոլվացման կետերի գործունեության ժամերի կարգավորման և բնակիչների գիշերային անդորրի ապահովման մասին որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: